ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16/նախագիծ/

28.03.2024թ. | ժամը 15:30-17:00 | ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության խորհրդակցությունների դահլիճ

Մասնակիցներ՝

Բազմաշահառու խմբի անդամներ՝

Նախագահող՝	Հովհաննես Հարությունյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
	Վաչե Տերտերյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
	Տիգրան Գաբրիելյան	Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ
	Արթուր Մանուկյան	Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
	Արման Պողոսյան	Ֆինանսների նախարարի տեղակալ (այլընտրանքային անդամ)
	Նազելի Վարդանյան	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ-ի տնօրեն
	Վիկտորիա Բուռնազյան	«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի փոխնախագահ
	Սոնա Այվազյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն (այլընտրանքային անդամ)
	Օլեգ Դուլգարյան	«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի նախագահ
	Արամ Օսիկյան	«ԱՍՍԱՏ Մ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն (այլընտրանքային անդամ)
	Արմեն Ստեփանյան	ԶՊՄԿ ՓԲԸ կայուն զարգացման գծով տնօրեն

ՀՀ ՎԱ ԱՃԹՆ-ի քարտուղարություն՝

Հասմիկ Մանուկյան	քարտուղարության ղեկավար
Անահիտ Անոյան	քարտուղարության փորձագետ

ԲՇԽ-ի բացակա անդամներ՝

Կարեն Կարապետյան	Արդարադատության նախարի տեղակալ
Արտյոմ Պետրոսյան	«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի իրավաբանական տնօրեն
Արթուր Նիկողոսյան	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ադմինիստրատիվ տնօրեն
Անահիտ Սիմոնյան	«Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի նախագահ
Մանվել Եղիազարյան	«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահ
Վահե Վարդանյան	«Գեոմայնինգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն (այլընտրանքային անդամ)

Արձանագրող՝ Անահիտ Անոյան

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի (ԲՇԽ-ի) նիստի բացում

Նիստը նախագահող ՏԿԵ փոխնախարար Հովհաննես Հարությունյանը ողջունեց նիստի մասնակիցներին՝ նշելով, որ ԲՇԽ-ի գործընկերների 2024թ. առաջին հանդիպումն է: Հ. Հարությունյանը ներկայացրեց օրակարգը և հավաստիանալով, որ դրա վերաբերյալ հարցեր չկան՝ առաջարկեց սկսել օրակարգի քննարկումը:

Օրակարգային հարցերը

2. ՀՀ ԱՃԹՆ-ի 2022 թվականի ԱՃԹՆ-ի հինգերորդ ազգային զեկույցի կազմման տեխնիկական առաջադրանքի քննարկում(15 րոպե)

ԱՃԹՆ-ի քարտուղարության ներկայացուցիչը տեղեկացրեց, որ ԱՃԹՆ-ի հինգերորդ ազգային զեկույցի տեխնիկական առաջադրանքը կազմվել է ԱՃԹՆ միջազգային քարտուղարության կողմից առաջադրվող այն նույն շաբլոնով, որով կազմվել են ԱՃԹՆ-ի նախորդ չորս ազգային զեկույցների առաջադրանքները: 5-րդ զեկույցի տեխնիկական առաջադրանքի տեքստի փոփոխությունները վերաբերվում են այն դրույթներին, որոնք խմբագրվել են՝ ելնելով զեկույցի 2022թվականին վերաբերվող առանձնահատկություններին, ինչպես նաև Հայաստանի 2-րդ վավերացման զեկույցի առաջարկներին: ԲՇԽ-ի քննարկմանն են ներկայացվում նաև Զեկույցի աշխատանքային շրջանակը սահմանող որոշումները, որտեղ ամրագրված են նաև ԱՃԹՆ հաշվետվություններ ներկայացնող ընդերքօգտագործողների և պետական լիազոր մարմինների ցանկը, զեկույցում ներկայացվելիք հարկերը և եկամուտները, համադրման համար էական ֆինանսական հոսքերը, համադրման դեպքում թույլատրելի/ոչ էական շեղման սահմանաչափերը, ընդերքօգտագործող ընկերություններում պետության մասնակցութան մասով տեղի ունեցած փոփոխությունները: Քարտուղարության ներկայացուցիչը տեղեկացրեց նաև, որ 2022թ. զեկույցի տեխնիկական առաջադրանքում ներառվել են ԱՃԹՆ-ի 2023թ. ստանդարտի նոր պահանջների (էներգետիկ անցման, տվյալների համաքագրման, հակակոռուպցիոն, գենդերային, սոցիալական և բնապահպանական թեմաներին վերաբերող) կիրառելության և կիրառելության շրջանակի մասին ուսումնասիրությունների և առաջարկությունների աշխատանքներ: Այնուհետ սկսվեց ներկայացվածի վերաբերյալ կարծիքների փոխանակում: Մասնավորապես, ԲՇԽ-ի կառավարության խմբակցության ներկայացուցիչը պարզաբանում խնդրեց 2023թ. Ստանդարտով պահանջվող՝ ընկերությունների ծախսային և հարկային ստուգումների ամփոփագրերի բացահայտման վերաբերյալ, ասելով, այդ տեղեկատվությունը Հայաստանն արդեն բացահայտում է՝ ներառելով դրանք ԱՃԹՆ-ի համապատասխան հաշվետվություններում: Քարտուղարության ներկայացուցիչը պարզաբանեց, որ Ստանդարտի պահանջը կազմվում է բոլոր երկրների համար և Անկախ Ադմինիստրատորը

զեկույցը կազմելիս պարզապես պետք է հաստատի, որ նշված պահանջը բավարարված է: Իսկ այդ տեղեկատվությունը ակնկալվում է, որ Անկախ ադմինիստրատորը կստանա՝ աշխատելով այն աշխատանքային խմբի հետ, որը պետք է կազմվի՝ զեկույցի աշխատանքներին աջակցելու նպատակով: Կառավարության խմբակցության մեկ այլ ներկայացուցիչ հարցրեց, թե արդյոք համայնքային պատասխանատուների կարողությունները բավարարում են՝ ԱՃԹՆ-ով պահանջվող հաշվետվությունները ներկայացնելու համար: Պարզաբանվեց, որ համայնքային պատասխանատուների կարողությունները մինչ այժմ բավարարել են ԱՃԹՆ հաշվետվությունները ՏԿԵՆ ներկայացնելու, որոնք էլ հետո դրանք մուտքագրել են առցանց հարթակ: Այդ կարողությունները զարգացնելու համար ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից կազմակերպվել են մի շարք վերապատրաստումներ, որոնց մասնակցել են ՏԿԵՆ, ՊԵԿ, ՇՄՆ գործընկերները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության խմբակցության ներկայացուցիչները: Ավելացվեց, որ այդ առումով ողջունելի է ցանկացած միջոցառում, որը կկազմակերպվի ՏԿԵՆ-ի կողմից, որին, անհրաժեշտության դեպքում, պատրաստակամությամբ կմասնակցեն ԱՃԹՆ քարտուղարության ներկայացուցիչները: Պարզաբանվեց նաև, որ տվյալների համակարգված բացահայտումների համակարգը ներդնելուց հետո համայնքներն արդեն ինքնուրույն են մուտքագրելու ԱՃԹՆ-ի հաշվետվությունները: Կառավարության խմբակցության ներկայացուցիչն առաջարկեց նաև մտածել այն ուղղությամբ, որպեսզի համայնքային աշխատակիցների պաշտոնի անձնագրում ամրագրվի ԱՃԹՆի հաշվետվություններ ներկայացնելու պահանջը, որը կապահովի այդ հարցի ինստիտուցիոնալիզացիան:

ԲՇԽ-ն **ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) ընդունեց** 2022թ. ազգային զեկույցի շրջանակին վերաբերող ԲՇԽ-ի որոշումները և տեխնիկական առաջադրանքը (ներկայացված են սույն արձանագրության հավելված 1-ում)՝ պայմանով, որ դրանք կուղարկվեն ընդերքօգտագործող ընկերությունների խմբակցության բացակայող անդամներին՝ դրանք էլեկտրոնային քվեարկելու և հաստատելու համար:

Բացի դրանից, ԲՇԽ-ն ընդհանուր համաձայնությամբ **հաստատեց** ԱՃԹՆ-ի 2022թ. ազգային զեկույցի Անկախ ադմինիստրատորի ընտրության գնահատող հանձնաժողովը հետևյալ կազմով.

Հովհաննես Հարությունյան-նախագահ, կառավարության խմբակցության ներկայացուցիչ,

Սոնա Այվազյան-քաղաքացիական հասարակության խմբակցության ներկայացուցիչ

Արմեն Ստեփանյան-ընդրքօգտագործող ընկերությունների խմբակցության ներկայացուցիչ

Հասմիկ Մանուկյան-ԱՃԹՆ քարտուղարության ղեկավար

3. ՀՀ ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության՝ ԲՇԽ-ի նախագահին հասցեագրված դիմումի քննարկում (60 րոպե)

Արձանագրվեց, որ նիստի բոլոր մասնակիցները ծանոթ են դիմումին, ուստի առաջարկվեց քաղաքացիական հասարակության խմբակցությանը՝ սկսել հարցի ներկայացումը: Խմբակցության առաջին ներկայացուցիչն ասաց, որ հենց սկզբից Հայաստանի՝ ԱՃԹՆ-ին միանալու, ԲՇԽ-ի հարթակը ստեղծելու գաղափարը միտված էր նրան, որպեսզի նույն տեղում հավաքվեն ռեսուրսների օգտագործման ոլորտում տարբերվող շահեր և կարծիքներ ունեցող կողմերը՝ կառավարությունը, բիզնեսը և քաղաքացիական հասարակությունը, որպեսզի հնարավորություն լինի քննարկել առկա կամ ծագող խնդիրները և արդյունավետ որոշումներ մշակել՝ դրանք միասնական մոտեցմամբ լուծելու համար: Սակայն քաղաքացիական հասարակության խմբակցության կարծիքով՝ ներկայումս ԲՇԽն չի կատարում այդ ֆունկցիան: ԲՇԽ-ն պատշաճ հաճախականությամբ չի հավաքվում (որի տենդենցը իրենք նկատել են 2018-ից սկսած՝ առանց դրա մեջ քաղաքական ենթատեքստ որոնելու), որի հետևանքով կարևոր հարցեր մնում են քննարկումից դուրս: Գուցե դրա հետ է կապված այն, որ, մասնավորապես 2018 թվականից սկսած ԶՊՄԿ և Լիդիան Արմենիա ընկերությունները գերադասում են հարցերը լուծել քաղաքացիական հասարակության, ԶԼՄ-ների, հանրային ակիվիստների կամ փորձագետների դեմ դատական հայցեր ներկայացնելու միջոցով (խմբակցությունը դիտարկում է 29 դեպք, որից 12-ը՝ ՀԿ-ների և ակտիվիստների դեմ, 19-ը՝ ԶԼՄ-ների), որը խմբակցությունը որակում է որպես հանրային մասնակցայնությունը սահմանափակելու միջոցառումներ, որոնք կիրառվում են ավտորիտար երկրներում և որոնք հետընթաց են գրանցում երկրի ժողովրդավարության ճանապարհին: Եւ քանի որ պետությունն արդեն մասնակցություն ունի այս ընկերություններում, կարելի է գնահատել, որ կառավարությունն ինքը, անկախ իր ունեցած մասնակցության չափից, պատասխանատվություն է կրում հանրային այդ ճնշումների համար: Ուստի, խմբակցությունն ակնկալում է կառավարության դիրքորոշումն այս հարցում: Բացի դրանից, նշեց ներկայացուցիչը, ի հայտ է եկել այլ հանգամանք ևս, երբ ադրբեջանական կողմում հայ բնապահպանների գործունեությունը խեղաթյուրում են և օգտագործում ի վնաս մեր պետության: Կամ Հայաստանում կարծիքներ են հնչեցնում, որ բնապահպաններով պետք է ԱԱԾ-ն զբաղվի: Այս ամենը լուրջ խնդիրներ են, որոնցով՝ ըստ խմբակցության կարծիքի, պետք է զաբաղվի ԲՇԽ-ն, որպեսզի քաղաքացիական հասարակության տարբեր գործիչների չպիտակավորեն և նրանց բարի անունը չվարկաբեկեն: Այսինքն, ԱՃԹՆ-ի հարթակը պետք է զբաղվի այդ բոլոր հարցերով և լուծումներ գտնի, այլապես քաղաքացիական հասարակության խմբակցության ներկայացուցչի կարծիքով՝ անիմաստ է դրանում մասնակցությունը:

Խմբակցության մեկ այլ ներկայացուցիչ մատնանշեց ԱՃԹՆ 2023թ-ի Ստանդարտի պահանջը՝ ընդրքօգտագործման գործունեության արդյունքում սոցիալական և բնապահպանական մոնիթորինգի արդյունքները հրապարակելու մասին, որը Հայաստանում իրականացվում է, և այդ շրջանակում բնապահպանական կազմակերպությունները, հրապարակում են, մասնավորապես, ծանր մետաղների պարունակության վերաբերյալ տվյալներ, սակայն այդ գործունեության համար թիրախավորվում են: Մինչդեռ ադրբեջանական քարոզչամեքենայի դեմ պայքարելու համար պետք է միասին աշխատել, որի եղանակներից մեկը ՇՄՆ-ի ներքո հանրային խորհրդի գործունեությունը կարող էր լինել, սակայն հասարակական կազմակերպությունները չեն հրավիրվել որևէ կերպ այդ խորհրդում մասնակցելու համար: Քաղաքացիական հասարակության խմբակցությունն ակնկալում է կառավարության դիրքորոշումը այս հարցում ևս: Նշվեց նաև, որ ԵՄ Արևելյան գործընկերության հավաքներին հայ բնապահպանների մասնակցությունը շատ բարձր է գնահատվում և Հայաստանը 6 երկրների մեջ առաջատար է դիտարկվում՝ բնապահպանական քաղաքականության տեսանկյունից:

Խմբակցության երրորդ ներկայացուցիչը հիշեցրեց նախորդ նիստին իր կողմից արված գնահատականները, մասնավորապես՝ Ամուլսարի հետ կապված և արձանագրեց, որ երկրում հետընթաց է դիտարկում, քանի որ այդ ժամանակից ի վեր համապատասխան հետևություններ չեն արվել: Ու բնապահպանական խնդիրներին ավելացել են անվտանգայինները, քանի որ արդեն ադրբեջանցիները պնդում են, որ Ամուլսարում պետք է մոնիտորինգ իրականացնեն և հիշելով այդ «բնապահպանների» նախորդ հաջողված փորձն, ասենք, Լաչինում, ինքը հստակ պետական վտանգ է տեսնում Ջերմուկում, որի պատասխանատվությունը կարող են դնել բնապահպանների վրա: Նախորդ նիստի ժամանակ դեռ պետությունը չուներ նշված կազմակերպության 12.5%-ը, իսկ այժմ դառնալով այդ մասի սեփականատերը՝ դառնում է այս բոլոր տարիներին կատարված իրադարձությունների պատասխանատուն, և իզուր չէ, որ ըստ ներկայացուցչի՝ միջազգային արբիտրաժում հայտնվել է համապատասխան գործ, որը գաղտնի է պահվում և որի հետևանքները շատ լուրջ կարող են լինել մեր երկրի տնտեսության և անվտանգության համար: Ձեռք բերելով ընկերության 12.5%-ը պետությունը առանձնակի օգուտ չի ստանում, սակայն այդ գործարքով պետությունն առաջացնում է շահերի բախում և ինքն իրեն զրկում է անաչառ արբիտրի դերից՝ բիզնես-քաղաքացիական հասարակություն վեճերում: Քարկոծելով քաղաքացիական կազմակերպություններին, որոնք կարող էին կառավարությանն օգնել՝ լուրջ որոշումներ կայացնելու համար, պետությունը թուլացնում է ընդհանուր հասարակությանը և դա չի ծառայում պետական շահերին: ՔԿԽ ներկայացուցիչն ասաց, որ եւրոդատարանում ընթանում է երկու դատական գործ քաղաքացիական ակտիվիստների հետ կապված և, եթե դատարանում նրանք շահեն, այդ վնասները վճարվելու են պետական բյուջեից: Ներկայացուցիչը որակեց, որ մեր պետությունն այդ առումով բոլոր հարթակներում է պարտություն կրում և միջազգային գործընկերները կարող են արդեն հավասարության նշան

դնել ավտորիտար Ադրբեջանի և Հայաստանի միջև, որը ճիշտ չի լինի, քանի որ քաղաքացիական հասարակությունը Հայաստանում ինքնուրույն է և չի կառավարվում պետության կողմից: Եւ որպես ազատ ուժ՝ պետությունը կարող էր հավակնել, որ քաղաքացիական հասարակության օգնությամբ կարող է լուծել երկրի առաջ կանգնած բոլոր տիպի անվտանգային հարցերը:

Քաղաքացիական հասարակության մեկ ուրիշ ներկայացուցիչն էլ իր խոսքում հավելեց, որ ժողովրադավարությունն առաջին հերթին հանրության, մասնավորապես ազդակիր համայքների բնակիչների ձայնը լսելի դարձնելն է, և երբ այդ գործընթացներում պիտակավորում և թիրախավորում են բնապահպաններին կամ ակտիվ քաղաքացիներին և դատական հայցեր են հարուցում՝ դրանով փորձում են զսպել կամ կաշկանդել նրանց գործունեությունը: Նա ասաց, որ երբ իրենք բոլոր միջազգային հարթակներում աշխատում են՝ պարզաբանելու համար, որ Ադրբեջանում բնապահպաններ կամ քաղաքացիական ակտիվիստներ չկան, որ դրանք պետական գործակալներ են, այսօր այդ երկրի պսեվդոբնապահպանները սոցիալական ցանցերով իրենք են տարածում, որ Հայաստանում են իրականում ճնշում քաղաքացիական հասարակությանը: Առավել ևս, որ Հայաստանի հանքագործների միությունը մեղադրում է քաղաքացիական հասարակության ամբողջ համայնքին և հայտարարում է թե համայնքի գործունեությունը Ադրբեջանի օգտին է կատարվում: Եւ այս ֆոնին համայնքի բնակիչն առավել է կաշկանդվում, որի օրինակն է այն դեպքը, երբ ինչ որ ՁԼՄ-ում հրապարակված Կապանի բնակչի բնապահպանական խոսքը թիրախավորվեց, այդ մարդուն սոցիալական ցանցերում պիտակավորեցին ամենավատ որակումներով, ուղեկցելով այդ ամենը ատելության խոսքի դրսևորումներով:

Պատասխան խոսքում նիստը նախագահող Հ. Հարությունյանը շնորհակալություն հայտնեց քաղաքացիական խմբակցությանը այս խնդիրները բարձրաձայնելու և քննարկման դաշտ բերելու համար: Նա նշեց, որ չնայած այս թեմայով նախորդ քննարկումներին, ինքը հարկ է համարում դրանց էլի անդրադառնալ՝ հաշվի առնելով նման հարցերի կարևոր նշանակությունը: Խոսքի սկզբում նա հիշատակեց Հրապարակ օրաթերթում իր հետ կայացած հարցազրույցի հրապարակումը և նշեց, որ հաճախ ՁԼՄ հրապարակումների վերնագրերն ու բովանդակությունը իրար չեն համապատասխանում: Ուստի, ինքը հարկ է համարում գործընկերներին ներկայացնել, թե իրականում ինչ են խոսել լրագրողի հետ: Լրագրողը հարցրել է, թե արդյոք ՀՀ կառավարությունը տեղյակ է Հայաստանում իրականացված այն նկարահանումներից, որոնք հետո տրամադրվել են Ադրբեջանին: Ինքը պատասխանել է, որ նման հարցերը ազգային անվտանգության ծառայության իրավասության տակ են գտնվում: Հ. Հարությունյանն այնուհետ նկատել է, որ հոդվածը ներառում է նաև հատվածներ՝ այլ մարդկանց հետ կայացած հարցազրույցներից, և իր կարծիքով՝ հոդվածագիրը այդ բոլոր մարդկանց խոսքը ընդհանրացրել և իրար է կապել այնպես, ինչպես հարմար է գտել: Մեջբերելով հոդվածում պարունակվող և

քաղաքացիական հասարակության խմբակցության դիմումի մեջ մատնանշվող իր խոսքը, Հ.Հարությունյանը ընդգծեց, որ իր այդ խոսքերը բացարձակապես նորմալ են հիբրիդային պատերազմի մեջ գտնվող երկրի պաշտոնյայի համար, որ ԱԱԾ-ն իրոք պետք է այդ ուղղությամբ լրջագույն աշխատանք իրականացնի, ու որ բոլորս այժմ մեր ամենօրյա աշխատանքներն իրականացնելիս պետք է աչալուրջ լինենք՝ թե արդյոք մեր կողմից հավաքագրվող տվյալներն ու տեղեկությունները չեն օգտագործվում մեր դեմ: Հ.Հարությունյանն ասաց, որ օրինակ, նույն Հրապարակ-ում հարգարժան տիկին Զարաֆյանն ասում է, որ ինքը ռուսական լրատվական միջոցի լրագրողի է հարցազրույց տվել, որն այն վաճառել է ադրբեջանցիներին: Այսինքն, մարդը չի իմացել, որ գործ ունի ադրբեջանական գործակալի հետ և այդպիսի դեպքերը կարող են շատ լինել: Կարելի է պատկերացնել տիկին Զարաֆյանի հոգեվիճակը, երբ անսպասելի ինքն իրեն հայտնաբերել է ադրբեջանական լրատվամիջոցների կայքում: Հարությունյանն ասաց, որ վստահ է, որ նա էլ է ուզում, որ մեր պետությունը կարողանա կանխել նման դեպքերը և պաշտպանի իր իրավիճակում հայտնված մարդկանց: Ուստի, այս ենթատեքստով է, որ բոլորը պիտի ակնկալեն, որ ազգային անվտանգության հատուկ ծառայությունները մոնիթորինգ իրականացնեն և կանխեն նմանատիպ դեպքերը, հետևեն, թե մեր երկրի միջազգային կապերից որոնք կարող են ի վնաս մեզ օգտագործվել: Նույնը ակնկալվում է նաև կառավարության բոլոր պատասխանատու անձանցից: Որպես օրինակ, Հարությունյանը հարկ համարեց ներկայացնել դեպք 2023թ. սեպտեմբերյան օրերից, երբ ինքն անձամբ կանխել էր ակրեդիտացիա չունեցող անձանց կողմից լուսանկարելու փորձերը: Այսինքն, նշեց Հարությունյանը՝ ներկա ժամանակները առավելագույն զգուշության և միմյանց պաշտպանելու պարտավորության ժամանակներ են, երբ մեզանից ոչ ոք չի կարող վստահ լինել, թե իր գործընկերն արդյոք որևէ երրորդ կողմի հետ կապված չէ և նրան չի փոխանցում մեր կողմից չգիտակցվող կարևորագույն տեղեկատվությունը: Ոչ ոք դրանից ապահովագրված չէ, ուստի այդ գործը լուռ, առանց բարձրաձայնելու պետք է իրականացնեն երկրի համապատասխան մարմինները:

Հ.Հարությունյանն այնուհետև անդրադարձավ ընդրքօգտագործող ընկերությունների որոշ բաժնեմասերի՝ պետությանն անցնելու հետ կապված հարցադրումներին: Նա նշեց, որ անցյալում էլ է շեշտել, որ չնայած բաժնեմասերի առկայությանը՝ պետությունը որևէ կերպ չի մասնակցում այդ ընկերությունների կառավարմանը: Որպես օրինակ նա բերեց ԶՊՄԿ-ի բաժնեմասերը և ասաց, որ դրանք դե-յուրե գտնվում են Պետական գույքի կառավարման կոմիտեում: Իսկ ընդերքի ոլորտի կառավարման իրավասությունը գտնվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ընդերքի վարչությունում, և կա Էկոնոմիկայի նախարարությունը, որ արդյունաբերական ոլորտների քաղաքականությունն է մշակում: ՏԿԵՆ Ընդերքի վարչությունը կանոնադրական իր լիազորություններն իրականացնելիս որևէ կերպ կաշկանդված չէ այն հանգամանքով, թե, ասենք, ԶՊՄԿ-ում պետությունն ունի բաժնետոմս, թե չունի: Այդ կամ այլ կազմակերպության հետ կնքված հուշագրերում կամ

համաձայնագրերում չկա որևէ կետ, որտեղ կստորադասվի պետական շահը, լիազորությունները կամ պետական որևէ գործողություն: Մատնանշված ընթացող դատական պրոցեսները, իր իմանալով, բավական վաղուց սկսված պրոցեսներ են և այժմ երկրում մի իշխանություն է, որը որևէ կերպ չի միջամտում դատական գործընթացներին և չի մասնակցում ոչ դրանք հարուցելուն, ոչ կարճելուն: «Նման դեպքի հայտնաբերումը ես որպես «կարմիր գիծ» եմ դիտարկում, որով պետք է բոլորս զբաղվենք: Ուզում եմ հասկանալ, թե այդ դատական պրոցեսներում ինչ պիտի անեին պետական մարմինները՝ ՏԿԵՆ-ը կամ ՇՄՆ-ն, որ չեն արել՞... Սակայն պնդել, որ բաժնետոմսեր վերցնելով՝ պետությունը ազդել է դատական պրոցեսների վրա՝ առնվազն արդար չէ: Եթե գործընկերները կբերեն օրինակներ, որ նշված գործերի քննության ժամանակ ՏԿԵՆ-ը, ՇՄՆ-ն կամ ՊԵԿ-ը ինչ որ տեղեկություն չի ներկայացրել, դիրքորոշում չի հայտնել՝ այդ ժամանակ մենք կզբաղվենք կոնկրետ դեպքով»: Շատ կարևոր է, որ բոլորը տեսնեն և հասկանան, որ բաժնեմասերի առկայությունը որևէ կերպ չի ազդում պետության լիազոր մարմինների վրա՝ կատարելու համար իրենց լիազորության շրջանակներում պահանջվող գործառնությունները: Ինչ վերաբերվում է դե յուրե բաժնեմաս ունենալու դեպքում պատասխանատվություն կրելուն, ապա կառավարությունը բաց է այդ մասով քննարկումներ անցկացնելուն և տեսակետներ լսելուն, ուստի Հ.Հարությունյանն առաջարկեց թողնել այն բաց՝ հետագա երկխոսությունը շարունակելու նպատակով: Հարությունյանը կիսեց նաև քաղաքացիական հասարակության խմբակցության ներկայացուցչի արտահայտած այն միտքը, որ որևէ կերպ պետք է թույլ չտալ տարբերվող կարծիք հայտնող մարդկանց պիտակավորումը և նրանց ադրբեջանական դրոշի տակ ներկայացումը: Անհրաժեշտության դեպքում, այդ դեպքերը պետք է իրավական գնահատական ստանան՝ դրանք կանխարգելելու նպատակով: Որպես արձագանք, ՔՀԽ ներկայացուցիչը նշեց, որ բոլորի համար անսովոր տեղեկատվական պատերազմի վիճակում են հայտնվել, և գուցե, հատուկ մասնագետների կարիք կա, որոնք կարող էին պատրաստել, սովորեցնել և ուղղություն տալ քաղաքացիական ակտիվիստներին՝ ինչպես պահել իրենց նման իրավիճակում, այսինքն՝ ինչպես ապահովել տեղեկատվական անվտանգությունը: Հ.Հարությունյանը նշեց, որ պատրաստ է քննարկել այդ առումով ՔՀԽ-ի ցանկացած առաջարկություն: ՔՀԽ-ի մեկ այլ ներկայացուցիչ ավելացրեց, որ ցանկացած առաջացող խնդիր պետք է բերել ԱՃԹՆ-ի հարթակ, կամ նույնիսկ լիազոր մարմինների հետ աշխատելու այլ ձևաչափ, որպեսզի հանրայնացնելուց առաջ նախապես քննարկվեն կնճռոտ հարցերը: Նաև գոհունակություն հայտնելով, որ պետությունը որևէ կերպ չի միջամտում դատական գործընթացներին, նա նշեց, որ պետությունը հիմա հնարավորություն ունի ազդեցություն ունենալ հանքարդյունաբերողների վրա, որոնք ավելի հանդունգն պահվածք են որդեգրել և պետությունը նաև բարոյական պատասխանատվություն ունի այդ կազմակերպությունների պահվածքի համար:

ՔՀԽ-ի այլ ներկայացուցիչ հավելեց, որ Հրապարակի հարցազրույցից հետո համացանցում տարածել են իրենց նկարները ադրբեջանական դրոշներով, երբ իրենցից որևէ մեկը արժանի չէր նման վերաբերմունքի: Նա նշեց նաև,որ անպատասխան է մնացել բնապահպանության տեսչական մարմնի կողմից արձանագրված խախտումը, որը Հ.Հարությունյանը խոստացավ ստուգել և հետամուտ լինել:

Քաղաքացիական հասարակության խմբակցության ներկայացուցիչների ելույթներին արձագանքեցին նաև ընդերքօգտագործողների խմբակցությունից, որի ներկայացուցիչը իր խոսքում կոչ արեց տագնապալի չներկայացնել դատական հայցերի հարցը, քանի որ ընկերություններում աշխատում են լուրջ իրավաբաններ, որոնք հայց չեն ներկայացնում, եթե չեն պարզում, որ այս կամ այն հայտարարությունը ակնհայտ զրպարտություն է: Ու պետք չէ մոռանալ, որ հանքարդյունաբերությունը միայն ղեկավարները չեն, այլ ոլորտում աշխատող հազարավոր մարդիկ կամ ներդրողներ, որոնց շահերը կամ բարի համբավը նույնպես պետք է պաշտպանել: Ընդերքօգտագործողները երբեք դեմ չեն ցանկացած հարթակում ցանկացած հարց քննարկելուց, չժխտելով, որ հանքարդյունաբերության ոլորտում կան խնդիրներ, այդ թվում՝ տարիներով կուտակված, որոնք պարտադիր պետք է լուծվեն: Միևնույն ժամանակ, ընկերությունների սահմանադրական իրավունքն է՝ դիմել դատարան, ժողովրդավարության գործիքներից մեկին, երբ հանդիպում են ակնհայտ զրպարտությունների: Ասվեց նաև, որ առկա տեղեկություններով՝ Լիդիան Արմենիա ընկերությունը որևէ արբիտրաժային գործ Հայաստանի դեմ հիմա չի հարուցել: Սակայն Պանդորայի արկղը բացված է, այսօր դա չի երևում, սակայն Լիդիան Արմենիայի ներդրողի տարբեր ներդրողները կարող են դիմումներ ներկայացնել կառավարությանը, որը կարող է անկառավարելի գործընթաց դառնալ: Եւ այդ ներդրողների ֆինանսական միջոցները այնքան են, որ թույլ են տալիս վերջիններիս՝ հանգիստ սպասել մի քանի տարի և հարցին նորից անդրադառնալ մեզ համար ամենաանսպասելի պահին, այդպիսին է աշխարհն այսօր և դա պետք է հաշվի առնել: Ընկերությունների խմբակցության ներկայացուցիչը մեկ անգամ ևս շեշտեց, որ ԱՃԹՆ-ի հարթակը միշտ բաց է, հասանելի, այնպես, ինչպես ինքը և ՔՀԽ-ին հրավիրեց այցելել կամ զանգել ընկերություն՝ ցանկացած հարցի պատասխանի կամ պարզաբանման համար: Նա կոչ արեց չստուգված տեղեկություններ չտարածել և հեշտորեն չվիրավորել մարդկանց, որոնք հսկայական աշխատանք են իրականացնում հօգուտ երկրի, հարկեր են վճարում պետական բյուջե:Նաև հրավերք հնչեց՝ գնալ Քաջարան՝ հանդիպումանցկացնել ԶՊՄԿ-ում: «Ուղղակի անընդունելի է, երբ չի օգտագործվում ԱՃԹՆ-ի հարթակը, այլ խնդիրները քննարկվում են ամենուր, բացի դրան կոչված վայրից»- ասաց նա:

Ընկերությունների խմբակցության մեկ ուրիշ ներկայացուցիչ ընդծեց, որ պետք է մտածել ընդհանուր պետության մասին և ոչ թե առանձին իրադարձությունների: Նա ասաց, որ օրինակ Սիսիան համայնքի 3 բնակավայրերում առաջին դասարանցիներ չկան, մինչդեռ այնտեղ իրենք

կարող են 50-60 աշխատատեղ են ապահովել: Պետք չէ բարձրաձայնել, ասենք սնդիկի պարունակության վերաբերյալ տվյալներ, որոնք շատ հեռու են իրականությունից: Պարզապես պետք է պայքարել նորմատիվների պահպանմամբ հանքարդյունաբերության համար, քանի որ այդ ոլորտից են գոյանում պետական եկամուտները և աշխատատեղերը մարզերում:

ԲՇԽ-ի նիստը նախագահող Հ,Հարությունյանը ամփոփեց քննարկումը՝ ընդգծելով, որ ԱՃԹՆ հարթակն այսուհետ էլ ավելի ակտիվությամբ պետք է օգտագործել՝ արտահայտված մտքերն ու տեսակետները ի մի բերելու և խնդիրներին լուծումներ տալու նպատակով:

4. Այլ հարցերի քննարկում, այդ թվում՝ 2025 և հետագա տարիների ԱՃԹՆ-ի գործունեության և միջոցառումների անցկացման ֆինանսական աղբյուրների քննարկում

ԱՃԹՆ քարտուղարության ղեկավարը ներկայացրեց օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ ԲՇԽ-ի անդամներին տրամադրված տեղեկանքի հիմնական բովանդակությունը, այն է՝

ՀԲ-ի կողմից տրամադրված երկրորդ դրամաշնորհն ավարտվում է 2024թ. դեկտեմբերի 31-ին և Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խումբը պետք է դիրքորոշում ձևավորի ԱՃԹՆ-ի Ստանդարտի կատարման շարունակականությունն ապահովող և դրա համար պահանջվող ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ: Նախնական գնահատամամբ բազմաշահառու խումբը կարող է քննարկել ֆինանսավորման հնարավոր աղբյուրների երկու տարբերակ.

1. Հայաստանի Հանրապետության բյուջեն, որն արդեն ապահովում է ազգային քարտուղարության աշխատանքի վարձատրության և ԱՃԹՆ անդամակցության տարեկան վճարը: Կպահանջվի ժամանակ և հիմնավորում պահանջող աշխատանք՝ այդ թվում ԲՇԽ-ի կառավարության խմբակցության ներկայացուցիչների ներգրավումը՝ ՀՀ բյուջեում այդ նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսելու և համապատասխան որոշում ընդունելու համար:

2. Նոր դոնորների ներգրավումը և այդ նպատակով համապատասխան աշխատանքների կազմակերպումը: Կպահանջվի ԲՇԽ-ի դիրքորոշումը և ներգրավումը՝ հնարավոր դոնորների հետ հանդիպումներ կազմակերպելու, բանակցություններ վարելու համար: Այս տարբերակի հետ կապված ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունը իր սեփական նախաձեռնությամբ 2024թ. հուլիսի 8-12-ը պլանավորվող առաքելության շրջանակում օրակարգի մեջ է մտցրել «դոնորների հետ կլոր սեղան» հանդիպումը, որը աջակցող դեր կարող է ունենալ լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր գտնելու առումով:

Նիստը կառավարող Հ.Հարությունյանը հանձնարարեց ԱՃԹՆ ազգային քարտուղարությանը՝ այդ թեմայով ԲՇԽ նախագահի համար համառոտ տեղեկանք պատրաստել՝ նշելով նաև հնարավոր դոնորների անունները: Դրա տեքստը պետք է տրամադրել ԲՇԽ անդամներին՝ կարծիքների և մեկնաբանությունների համար, այնուհետ որոշում կայացնելու համար հրավիրել նիստ կամ կազմակերպել էլեկտրոնային քվեարկում

Նիստի կողմից դիտարկված այլ հարցերի շարքում քննարկվեց քաղաքացիական հասարակության խմբակցության առաջադրած հարցը՝ ԱՃԹՆ-ի քննարկումներում համայնքների ներկայացուցիչների մասնակցությունը մեծացնելու վերաբերյալ: Հնչեց պատասխան առաջարկ, որ դրա լուծումը գործող աշխատակարգն արդեն ունի, որը նախատեսում է խմբակցություններից ցանկացածի հրավերով ԲՇԽ նիստերին ունենալ հրավիրյալ անձինք, այդ թվում, անհրաժեշտության դեպքում՝ համայնքային գործիչների, ՏԻՄ ներկայացուցիչների:

Սրանով նիստի օրակարգը սպառվեց: